



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հ կառավարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության, նախաձեռնել և իրականացնում է պետական գնումների իրավակարգավորման և գործընթացների բարեփոխումներ, որի շրջանակներում մշակվել և ընդունվել են «Գնումների մասին» նոր օրենքը և դրան համապատասխան կանոնակարգող այլ ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև բարեփոխվել է Armeps էլեկտրոնային գնումների համակարգով գնումների կազմակերպման գործընթացը:

Եվրոպական բիզնես ասոցիացիան ողջունում է բարեփոխումների իրականացման ուղղությամբ ներդրված ջանքերը, սակայն միևնույն ժամանակ հարկ է համարում բարձրաձայնել գնումների նոր գործընթացներում որոշակի խնդիրների լուծման անհրաժեշտության մասին, որոնք ներկայացվել են ասոցիացիայի անդամների կողմից:

«Հ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 40-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Իսկ նույն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

անհամապատասխանությունը:

Կարծում ենք, որ հայտի ապահովման չներկայացումը կամ հրավերի պահանջներին ոչ համապատասխան ներկայացումը հայտը միանգամից մերժելու հիմք չպետք է հանդիսանա, առավել ևս, երբ հայտատուի ներկայացրած մնացած առավել կարևոր փաստաթղթերը՝ պիտանելիության, տեխնիկական և ֆինանսական չափորոշիչները ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Այս պարագայում մի փաստաթղթի չներկայացման հետևանքով մրցակցային հայտերը կարող են անվերապահորեն մերժվել, ուստի կարծում ենք, որ պետք է հնարավորություն տրվի հայտատուին շտկելու իր սխալը: Առաջարկում ենք սույն որոշման մեջ փոփոխություն կատարել և հնարավորություն տալ նիստը մեկ օրով կասեցնելու՝ նաև հայտի ապահովման ներկայացման կամ հայտի ապահովման՝ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնելու համար:

Բացի այդ, էլեկտրոնային համակարգը պետք է ունենա հայտ ներկայացնողին օգնելու բնույթ: Սովորաբար կիրառվող նմանատիպ գործիքներում, երբ պարտադիր ներկայացման փաստաթղթերը ամբողջությամբ ներբեռնված չեն, հնարավոր չի լինում հայտը ուղարկել, իսկ ներկայումս Armeps համակարգում այդպես չէ: Առաջարկում ենք էլեկտրոնային համակարգում որպես պարտադիր դաշտ համարել հայտի ապահովումը և հնարավորություն տալ հայտը ուղարկել միայն բոլոր փաստաթղթերը կցելուց հետո: